


ՀԵՄԻՆԿՈՒԷԻ ՄՐՑԱԿԻՑՆ ՈՒ ԱՆՈՐ ՊԵԽԵՐԸ

Posted on January 9, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Ուիլիըմ Սարոյեան

Սովետս Ծիրանի, Երեւան, Դեկտեմբեր 2021

Երեւան 1978

Թեեւ ամիսը չեմ յիշեր, սակայն կը յիշեմ որ մռայլ եւ տհաճ օր մըն էր: Յանձնարարուած էր ինծի իբրեւ դաս գեղանկարչական անհատական ցուցահանդէս մը կազմակերպել, որուն արդիւնքը կրնար ազդեցութիւն ունենալ աւարտաճառիս վրայ: Տարբեր տեղերէ մերժուելէ ետք, ղեկավարներս՝ գրականագետ Էդուարդ Ջրբաշեանն ու արուեստաբան Վահան Յարութիւնեանը կը յանձնարարէին «Մշակութային կապի կոմիտեութիւն» դիմել: Տեղը շատ յարմար չէր ցուցահանդէսի համար եւ այդ պատճառով ալ անտրամադիր էի ու մտահոգ: Սակայն ստիպուած էի յարմարուիլ...:

Կը բարձրանայի պատմամշակութային արժէք ներկայացնող շէնքի մը աստիճաններէն, որոնցմէ բարձրացած էին Արամի և Ռուբէնի նման ականաւոր դէմքեր... : Ելայ եւ մտայ երկրորդ յարկի այն սրահը, ուր վճռորոշ ժողովներ տեղի ունեցած էին... Առաջին հարապետութեան տարիներուն: Երբ «մասնագետի աչքով» սրահը կ'ուսումնասիրէի, յանկարծ դիմացս ցցուեցաւ Ուիլիըմ Սարոյեանը եւ ցուցամատը թափ տալով վրաս ըսաւ.

- Դուն ո՞վ ես, ի՞նչ գործ ունիս հոս, ինչո՞ւ եկար:

Շշմած ու շուարած չկրցայ անմիջապէս պատասխանել, ան շարունակեց.

- Թելեֆոնիստ , թելեֆոն շինելո՞ւ եկար, ինչո՞ւ թելեֆոն չ'աշխատիր...:

Մինչ այդ քարտուղարուիին, որ գաւաթ մը բռնած էր ձեռքը, Սարոյեանի ետեւը կեցած, աչքով ունքով կը հասկցներ որ խաղաղեցնեմ զինք: Իրականութեան մէջ, մեկը պետք էր զիս հանդարտացներ... այդ պահուն: Սակայն Սարոյեանն էր վերջապէս: Ան շարունակեց.

- Ես գէշ բան չխօսիմ, Հայաստան լաւ, «Սովետ» լաւ: Այդքան դժուա՞ր Ամերիկա խօսիլ: Ես գիտեմ Հայաստան, Չարենց, Սարեան...

Մօտեցայ եւ ըսի.

- Պրն. Սարոյեան, ես «թելեֆոնիստ» չեմ, ուսանող եմ եւ դուրսէն... քեզի պէս...

- Ամերիկացի՞...:

- Ո՛չ, լիբանանցի:

- Ուրեմն Պէյրութէն գաս:

- Այնճարէն:

«Այնճար» բառը կարծէք մոգական ազդեցութիւն գործեց վրաս: Ան խոր շունչ մը քաշեց եւ լայն ժպիտ մը գծագրուեցաւ անոր «թափթփած» պէտերուն տակէն:

Քարտուղարուհին առիթէն օգտուելով հրաւիրեց որ նստինք: Նստանք եւ երկրորդ թէյ մըն ալ ապսպրեց ինծի համար:

- Հիմա հասկցայ, Այնճա՞ր ըսիր:

- Այո՛, հոն ծնած եմ, մանկութիւնս եւ պատանեկութիւնս հոն անցուցած եմ եւ ապա հոս եկած եմ ուսանելու:

- Այնճարը լաւ տեղ , լաւ մարդիկ , Մուսալեռ : Համով հերիսա եփեն, ինծի հերիսա կերցուցին, ամմա՛ համով էր... տոլմայի չափ համով էր... կերանք խմեցինք...: Չիս տեղ մը տարին, ջուր կար, շուք կար, հա՛ թմբուկ-զուռնա կար, երգեցինք պարեցինք... դուն հո՞ն էիր:

- Ո՛չ:

- Ինչո՞ւ հոն չէիր:

- Ես հոս էի, ափսոս որ հոն չեմ եղած:

- Դուն հո՞ս դպրոց կ'երթաս:

- Այո՛:

- Ի՞նչ կը սորվիս:

- Արուեստաբանութիւն:

- Ատ ի՞նչ «բանութիւն» է...

- Պրն. Սարոյեան «ֆիլոլոկ»ի բաժինը կ'ուսանիմ, «Արթ քրիթիք» պիտի ըլլամ:

- Հա՛, հիմա հասկցայ, դուն Ամերիկա մի գար, հոն չեն ձգեր որ մեծնաս, հոս կեցիր կամ Լիբանան գնա... Պուրճ Համուտ... Ես գիտեմ... շատ լաւ տեղ...է :

Հոս կ'ուզէի յիշեցնել իրեն, թէ շաբաթ մը առաջ մենք հանդիպած էինք Ռազմիկ Դաւոյեանի բնակարանը ու միասին ընթրած:

Պահը յարմար կը նկատէի, երբ յանկարծ ան դարձեալ հարցուց.

- Անունդ ի՞նչ է:

- Մովսէս:

-Մովսէս ի՞նչ:

- Հերկելեան:

- Հերկելեան, Այնճա՛ր, դուն... բանաստե՞ղծ:
- Ոչ, բանաստեղծը եղբայրս է, Պետիկ Հերկելեանը:
- Հա՛, հիմա հասկցայ... "My name is Aram", այո ան արտասանեց, պզտիկ տղայ, բայց յետոյ մեծ մարդ... մեծ բանաստեղծ... Շիրազ: Ինչո՞ւ հոս եկար:
- Արուեստաբանը պետք է որ նկարել գիտնայ, մասնաւոր դասերու կը հետեւիմ Արտաշէս Յունանեանի եւ Արթո Պաղտասարեանի քով: Եկած եմ հոս որ այս սրահին մէջ ցուցահանդես կազմակերպեմ:
- Յունանեան գիտեմ, մեծ «artist» է: Այդ մէկը չեմ ճանչնար: Այս սրահը լաւ չէ «painting»ի համար: Այս Վարդգէս Համազասպեանը...

Խօսքը օդին մէջ մնաց, որովհետեւ քարտուղարուհին ներս հրաւիրեց զինք... Ամերիկա խօսելու համար: Թէեւ Սարոյեանի առողջանութիւնը ակելի ժխտական կը հնչէր, ինծի յայտնի չեղաւ թէ ան Համազասպեանի մասին լա՞ւ, թէ գէշ պիտի խօսէր: Ափսոս սակայն որ ան գնաց, որովհետեւ գոհ էի որ առանձին կը հանդիպիմ իրեն: Ահագին հարցեր ունէի, յատկապէս քանդակագործ Վարազ Սամուէլեանի մասին: Ռազմիկ Դաւոյեանի տան մեր հանդիպման ատեն, իր ուշադրութիւնը չկրցայ գրաւել ու հետը գրուցել, հակառակ անոր որ Ռազմիկ Դաւոյեանն ու Յակոբ Յակոբեանը լաւ ձեւով ներկայացուցին զիս: Շատ դեմքեր կային հոն եւ արդէն իսկ կենացները շիկացած էին, երբ ես հասայ: Հոն էր նաև լուսանկարիչ Պօղոս Պօղոսեանը, որ լուսանկարեց նաեւ զիս եւ Սարոյանը առանձին: Ես ալ լուսանկարեցի զինք եւ Սարոյեանը միասին: Սակայն ես չկրցայ այդ թանկագին յիշատակը ունենալ... մնաց Պօղոսի մօտ, որովհետեւ իբրեւ թէ «պատժեց» զիս, անոր համար որ զինք եւ Սարոյեանը նկարելու ատեն սխալ կոճակի վրայ կոխած էի... : Ինչ որ է... անցնինք:

Սպասեցի մինչեւ որ դուրս գայ Սարոյեանը ու գրոյցը շարունակեմք: Սակայն երբ ան դուրս ելաւ Համազասպեանը իր թեւը մտած, ես ներս հրաւիրուեցայ Համազասպեանի տեղակալի՝ Մարտիրոսեանի մօտ: Սիրտս ճմլուեցաւ, անգամ մըն ալ ե՞րբ առիթը պիտի ունենայի հանդիպելու այս քանքարաւոր հայուն...



Գործ՝ Փօլ Կիրակոսեանի

Սիրելի ընթերցող,

Նախ քան եզրակացնելը, հարկաւոր է նաեւ պատմել թէ ինչպէս Փօլ Կիրակոսեանը պատկերած է Սարոյեանը:

1979 կամ 1980, Պէյրուզ:

Ամառուայ տաք ու խոնաւ հեղձուցիչ օր մըն էր: Քովը գացած էի իրեն յանձնելու նամակ մը արուեստաբան Վահան Յարութիւնեանէն, որ իմ «թեկնածուականի» երկու ղեկավարներէն մէկն էր: Կիրակոսեանը հայերէն կարդալ չէր գիտեր: Նամակը ես ընթերցեցի, ու հակառակ անոր որ դարձեալ Հայաստան կը հրաւիրէին զինք ցուցահանդէսի, առաւ, մէկ կողմ դրաւ ու հարցուց.

-Դուև Սարոյանին կը ճանչնամ:



-Այո կը ճանչնամ:

- Մենձ մարդ է:

- Շատ մեծ: Ամերիկահայ նշանաւոր գրող է: Այնքան մեծ որ Հեմիսկուէի «ընկերը» եղած է:

-- Հեմիսկուէյը ըրեն չը սըրեր... ես գիտեմ: Ինձը ըսին որ Սնապեանը գիրք մը պըտի գրէ իր մասին, եւ կ'ուզէ որ Սարոյեանին նկարեմ : Ընծի «photo»-ներ բերին... : «Ատոնք» չեն գիտեր որ ես Սարոյանին չեմ ճանչնար: Ըրեն չեմ տեսած: Ի՞նչպէս պըտի գծեմ:

- Դուն կրնաս... դուն ոեւէ մէկը չես...:

- Դուն չես հասկնար: Ասիկա «abstract» չէ, «portrait» է, Սարոյանը թէ պըտի ապրի ու խօսի եւ թէ «character»ը մէջը պըտի ըլլայ. պէտք է իրմէն բան մը կարդամ... : Ընծի ըսին. մէկ պէխը պատիկ է միւսը՝ մենձ. Ճի՞շդ է:

-Չեմ կարծեր: Գուցէ այդպէս կը թուի: Ես անձնապէս տեսած եմ զինք, իմ տպաւորութիւնս այն է, որ ան պարզապէս անխնամ կը ձգէր պէտերն ու մագերը...

-Հա՛, հիմա հասկցայ, մենձ մարդիկ այդպէս կ'ըլլան: Սարոյանի «character»ը իր պէտերուն մէջն է... հասկցայ: Բայց ըրմէն գիրք մը պէտք է կարդամ, որպէս զի գիտնամ ո՞վ է, ի՞նչ մարդ է... որպէս զի գիտնամ ինչպէ՞ս պըտի գծեմ: Դուն կրնաս բերել:

Բարեբախտաբար Երեւանի «Պուկինիստական» խանութէն ձեռք ձգած էի Սարոյանի "My Heart In the Highlands" անգլերէն հատորը, զոր քանի մը օր ետք տարի իրեն:

Տարիներ ետք երբ արդէն Սնապեանի խմբագրած Սարոյանի հարցազրոյցներու հաւաքածոն հրատարակուած էր, օր մը հեռաձայնեց.

--Նայիր, քըզի պըտի ուրախացնեմ: Եկուր, միայն թէ մէկ անգամէն վերը «Atelier» ելիր և մէկուն բան մը մ'ըսեր:

Գացի, բարձրացայ վեր, Սարոյեանի դիմանկարն ու այլ ջրանակար մը երկարեց ինծի, ըսելով.

-Ասիկա քըզի պահէ, մէկուն մը'տար ու մէկուն մ'ըսեր...: Այս «aquarelle»ը ծախէ, որ քըզի «խաշլըք» ըլլայ... մէկուն մ'ըսեր...:

Իմ արուեստասեր ընթերցող՝

Խոստովանիմ որ ան պարբերաբար նկարներ կը նուիրէր ինծի... միշտ պատուիրելով որ գաղտնի պահեմ: Մեկնելով իր մարդասիրական սկզբունքներէն, ան սովորութիւն ունէր նկարներ նուիրել որոշ անձերու ու անձնաւորութիւններու... թէկուզ ընտանիքէն գաղտնի: Կիրակոսեանի մարդկային այս կեցուածքի մասին հակաւոր է որ յատուկ նշմար մը գրեմ:

Սարոյանի դիմանկարը թափանցիկ «calque» թուղթի վրայ իրագործուած արուեստի

իւրայատուկ գլուխ-գործոց մըն է, որուն կերպարի ազատախօսի ու ամբասպինդ
նկարագրի դրսեւորման մէջ, բացի աչքերէն, կենսական դեր եւ նշանակութիւն ունին
նաեւ արագ ու անկաշկանդ քանի մը վրձնահարուածներով արտայայտուած մազերն ու
յատկապէս՝ պէխերը...:

Ի դէպ, Սարոյանի կերպարը բազմաթիւ հայ կերպարուեստագետներու նախընտրած
թեմաներէն եղած է: Անոնցմէ շատեր, յաջողած են կերտել ուրոյն ու տիպար
«Սարոյեաններ»: Ինչպէս՝ Արա Շիրազ, Դաւիթ Երեւանցի, Յակոբ Ճանպազեան, Սկրտիչ
Տարազճեան, Սամուէլ Համբարձումեան, Վանուշ Պապիկեան, եւ ուրիշներ:

.....

Հակաւոր է վկայել նաեւ, թէ Սարոյանը այդ տարի գրական ոչ միայն աշխուժութիւն, այլ
ուղղակի փոթորիկ ստեղծեց Երեւանի մէջ: Ամէն տեղ իրերայաջորդ հանդիպումներ կը
կազմակերպուէին (Ակադեմիա, Գրողներու Միութիւն, Մատենադարան, Պետ.
Համալսարան...) եւ միշտ սրահները ծայրէ ծայր լեցուն կ'ըլլային: Հարցումներ ու
հարցումներ...: Ան կը պատասխանէր իր գիտցած Պիթիսի բարբառով:

Հոս անհրաժեշտ է որ ճշդում մը ընեմ նաեւ: Ան գովասանքներ եւ նոյնիսկ ներբողներ կը
շռայլէր հայ գրողներու, նկարիչներու եւ առհասարակ տարբեր տեսակի
մտաւորականներու հասցէին: Չափազանց կը գովէր նաեւ հայ ժողովուրդն ու
Հայաստանը: Կողմնակի ունկնդիր մը կրնար շողոքորթութիւն համարել այդ բոլորը:
Թէեւ «հարբած» կը թուէր ըլլար, իրեն շնորհուած բացառիկ ընդունելութիւններէն ու
պատիւներէն... Այնուամենայնիւ անկեղծ էր իր արտայայտութիւններուն մէջ, որովհետեւ
ինչքան որ կը սիրէր իր ծննդավայրն ու կը գնահատէր Մարդկայինը Մարդու մէջ, նոյքան
կը սիրէր իր Պապենական Հայրենիքն ու կը գնահատէր Ազգայինը Հայու մէջ ... վկայ՝ իր
ամբողջ գրականութիւնը... :

Սարոյեանն էր ի վերջոյ...:

Մտաւորական դասն ու ուսանողները ծարաւը ունէին Սարոյեանի նման
մեծութիւններու... այդ տարիներուն:



Գործ՝ Մկրտիչ Տարազճեանի

There are no comments yet.